Գողթնեցիք իրենք, սակայն, այլ կերպ էին մտածում։ Կոտորածի լուրն առնելուն պէս՝ Ղազարի մարտական ուժերը շարժման մէջ դրուեցին,*) և դեկտ. 27-ին, փոխվրէժի դայրոյթով լեցուած, յարձակուեցին Փառակայից 3 վերստ հեռու գտնուող Բլաւ աւազակաբարոյ թուրք գիւղի վրա, դիշերային դրոհով դրաւեցին ու ոչնչացրին նրան։ Ու այնուհետև ամիսներ շարունակ, անընդհատ յարձակումներ էին գործում շրջակայ մահմետականութեան վրա՝ ահ ու սարսափի մատնելով, մանաւանդ օրդուբաթցիներին։ Փոխվրէժը օրդուբաթցիներից՝ դարձաւ Գողթն ազատ մնացած վեց գիւղերի ոգևորութեան աղբիւրը։ Նոյն նպատակի համար քայլեր էին առնում և Ղափանում Գ. Նժդեհի կողմից։ Մի քանի ամիս յետոյ, Ագուլիսի վրէժը լուծուեց։

---

*) Հենց ագուլեցիների պահանջով ինքնապաշտպանողական ուժերի ազդեցութիւնը չէր տարածուում Ագուլիսների վրա։ այդ ձևով յոյս ունէին մեղմել թուրքերին և արժանանալ նրանց բարեհաճութեան։ Բնորոշ է, որ այստեղ էլ առաջին սպանուողը եղան այսպէս կոչուած «թրքասէր» հայերը։